ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Ոչ մի ժամանակ մեր ինտելիգենցիան այնքան բուռն ցանկութիւն չի ունեցել օգնութեան հասնելու հայ ազգաբնակութեան կենսական կարիքներին, որքան վերջին տարիներում. սակայն այդ ցանկութիւնները, ձգտումները հիմնուած լինելով հարևանցի տեղեկութիւնների վրա, չեն մտել կիրառութեան մէջ և կամ իրականանալու դէպքում անյաջողութեան են հանդիպել, որովհետև ոչ միայն պատրաստի հող չեն գտել, այլ դուրս է եկել, որ սխալ գաղափար ունենալով այն միջավայրի մասին, ուր կոչուած էին իրանց նպատակներն իրագործելու, հանդիպել են խոշոր արգելքների և հարկադրուած են եղել բաւական ուժ ու եռանդ վատնելուց յետոյ ձեռնունայն յետ քաշուել կամ սկսել մի այլ նոր ձեռնարկութեան։

Մեր ինտելիգենցիայից շատ քչերին ծանօթ է հայ ժողովուրդը և այդ բնական է։ Հայկական կեանքի այլ և այլ երևոյթների ուսումնասիրութիւն թէև կատարուում է, թէև մեր պարբերական մամուլը իր թղթակիցների միջոցաւ երբեմն երբեմն այս ու այն գիւղի, շրջանի, քաղաքի մասին տալիս է ուշադրութեան արժանի տեղեկութիւններ, սակայն սրա մասնակի բնաւորութիւն կրող գրուածներ են, որանք առօրեայ բազմաթիւ հրատապակութիւնների մէջ աննկատելի են մնում և միտքողջութիւն կազմել չեն կարող, մինչդեռ երբ ցանկանում ենք մեր ժողովրդի տնտեսական կեանքին, նրա բարեփոխութեան համար գործունէութեան որոշ սիստեմատիկ ծրագիր մշակել, մենք պէտք է կանգնած լինենք փաստական հողի վրա, որից դժբաղդաբար զուրկ ենք, չունենալով մեր ձեռքին ճշգրիտ տեղեկութիւններ։ Այդ պատճառով մեր ժողովրդի բարեկեցութեան մասին հոգացողները շատ անգամ իրանց դատողութիւնները հիմնում են մեր երկրից դուրս գտնուած

երկրների առանձնայատուկ փաստերի վրա, որ ի հարկէ մեր վերաբերմամբ կարող չեն բաւարար լինել։

Ամեն մի առաջարկութիւն, ամեն մի բարեփոխութիւն պէտք է բղխի տեղական հասունացած պահանջներից. իսկ այս պահանջները չոչափելի կլինեն վիճակագրական տեղեկութիւնների ի մի ամփոփելով և հրատարակելով։

Մենք միշտ լսում ենք մեր ժողովրդի բազմազան կրօնաբարոյական, կրթական, տնտեսական շատ կարիքների մասին, բայց տեղանի վրա չունենք այդ պահանջների չափը թուանշաններով ցոյց տուող տեղեկութիւնները։ Մինչդեռ համոզուելու համար հարկաւոր են փաստեր և ոչ լոկ խօսքեր։

Ահա այդ պակասը դէթ մասամբ լրացնելու համար մենք կազմեցինք հարցացուցակ օգտուելով պ. Ս. Զաւարեանի «Մրագիր գիւղացի Ազգաբնակութեան տնտեսական վիճակի ուսումնասիրութեան» գրքոյկից կրճատելով մի քանի մանրամասնութիւններ և աւելացնելով հոգևորականութեան և եկեղեցուն վերաբերեալ հարցեր, և այս համարի հետ ուղարկում ենք մեր բաժանորդներին որպէսզի հարցերի դեմաց պատասխանները գրելով մեզ վերադարձնեն։

Վիճակագրական տեղեկութիւնները բաղկացած են հետևեալ մասերից. 1. գիւղական կեանքի ուսումնասիրութեան համար.—

ա.	Աշխարհագրական դիրքը և կլիման	10	հարց.
բ.	Ազգաբնակութիւն . .	9	»
գ.	Երկրագործութիւն . .	11	»
դ.	Ոռոգումն	5	»
ե.	Այգեպանութիւն, պարտ. և բանջար.	5	»
զ.	Անասնապահութիւն . .	24	»
է.	Արհեստներ	6	»
ը.	Գիւղամիջի աշխատանք . .	7	»
թ.	Դրսի աշխատանք . . .	4	»
ժ.	Առ և տուր	3	»
ժա.	Վարկ և տոկոս . . .	3	»

ժբ. Հասարակական եկամուտներ . 7 »
ժգ. Հասարակական ծախքեր . 5 »
ժդ. Լուսաւորութիւն . . . 13 »
ժե. Բարոյականութիւն . . 11 »
ժզ. Բժշկութիւն . . . . 4 »
ժէ. Եկեղեցի . . . . 7 »
ժը. Եկեղեցականութիւն . . 11 »
ժթ. Քահանայի արդիւնք . . 14 »

Պ Քաղաքների համար.—

ա. Հոգևորականութիւն . . 6 հարց
բ. Ծուխ . . . . . 7 »
գ. Լուսաւորութիւն . . . 4 »
դ. Քահանայական արդիւնք . 11 »
ե. Եկեղեցական արդիւնք . . 8 »

Վիճակագրական տեղեկութիւնները կարողեն օգտակար լինել միայն այն ժամանակ, երբ հարցերին տրւում են ճիշտ պատասխաններ և մեր հարցերը այնքան պարզ են դրուած, որ առանց դժուարութեան կարողեն պատասխանել մեր բարեկրօն հայրերը, որոնց և խնդրում ենք մինչև ներկայ տարուայ վերջը մեզ հասցնել։

Անցեալ տարի Ալէքսանդրապոլի փոխանորդութեան գիւղերի քահանաներից մենք պահանջեցինք և բացառութեամբ մի երկու գիւղի ստացանք, որն և գտնւում է այժմ մեզ մօտ, բայց աչքի առաջ ունենալով, որ դա միայն հայութեան մի հատուածի վիճակագրական տեղեկութիւններն են, իսկ մենք այդպիսի տեղեկութիւններ չունենք մեր միւս թեմերի գիւղերի և քաղաքների աղդաբնակութեան մասին, ուստի ուղարկում ենք հարցացուցակները և մեծ յոյս ունենք, որ գիւղական կեանքին մօտիկ կանգնած ծխական քահանաները չեն զլանալ բարեխղճութեամբ կատարել այս մեր առաջարկութիւնը։ Նոյնը խնդրում ենք նաև քաղաքներում գտնուած ծխատէր քահանաներին, որպէսզի մեր կազմած վիճակագրական

տեղեկութիւնները ամփոփի իւր մէջ Ռուսահայոց ամբողջութիւնը։

Մենք վիճակագրական տեղեկութիւններ կազմողներին կխնդրէինք եթէ հնարաւորութիւն ունեն, աւելի մանրամասն նկարագրել այն ընդհանուր երևոյթները, որոնք կարևոր նշանակութիւն ունեն որևէ կուլտուրական ձեռնարկութեան զարգացման համար, մասնաւորապէս թէ ծրագիրի տնտեսական աշխատանք կարող է զարգանալ իրանց գիւղում կամ իրանց շրջանում։ Եթէ կան կարևոր հարցեր, որոնք չեն մտած այս հարցացուցակի մէջ, թող իրանք կազմեն և կցեն սրան, որ և շնորհակալութեամբ ինկատի կունենանք ընդհանուր պատկերը կազմելու ժամանակ։

Մաս. Վարդ.